

**ΥΠΟΥΡΓΕΙΟ ΠΑΙΔΕΙΑΣ, ΠΟΛΙΤΙΣΜΟΥ, ΑΘΛΗΤΙΣΜΟΥ ΚΑΙ ΝΕΟΛΑΙΑΣ
ΔΙΕΥΘΥΝΣΗ ΜΕΣΗΣ ΓΕΝΙΚΗΣ ΕΚΠΑΙΔΕΥΣΗΣ**

ΕΝΙΑΙΑ ΓΡΑΠΤΗ ΑΞΙΟΛΟΓΗΣΗ ΤΕΤΡΑΜΗΝΩΝ 2022-23

Α' ΤΑΞΗ ΛΥΚΕΙΟΥ

ΗΜΕΡΟΜΗΝΙΑ 27.01.2023

ΕΞΕΤΑΖΟΜΕΝΟ ΜΑΘΗΜΑ: ΑΡΜΕΝΙΚΑ (Α' ΣΕΙΡΑ)

ΚΩΔΙΚΟΣ ΜΑΘΗΜΑΤΟΣ: Α012

ΟΔΗΓΟΣ ΔΙΟΡΘΩΣΗΣ

**ΣΥΝΟΛΙΚΗ ΔΙΑΡΚΕΙΑ ΓΡΑΠΤΗΣ ΕΞΕΤΑΣΗΣ: 135 λεπτά
Ο ΟΔΗΓΟΣ ΔΙΟΡΘΩΣΗΣ ΑΠΟΤΕΛΕΙΤΑΙ ΑΠΟ ΕΝΤΕΚΑ (11) ΣΕΛΙΔΕΣ**

**1 ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԸՄԲՈՆՈՒՄ ԵՒ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ
(30 նիշ)**

Ուշադրութեամբ կարդացէք հետեւեալ հատուածը եւ պատասխանեցէք հարցումներուն:

Դպրոցին մէջ ամենէն տաժանելին՝ ճաշի ժամն էր:

Ամէն աշակերտուհի իր հետ կը բերէր կէսօրուան ճաշը . չքաւորները՝ հաց եւ քանի մը ձիթապտուղ , եթէ այդքանն ալ ունենային: Ուրիշ պզտիկներ՝ մէկ կանոնաւոր կերակուր եւ պտուղ մը, իսկ հարուստները իրենց տան ծառային ձեռքով կը դրկէին մեծ ափսէներ, երկու-երեք տեսակ կերակուրով եւ անուշեղէնով:

Տնտեսուհին կերակուրները կը տաքցնէր կրակարանին վրայ: Կերակուրներու հոտը, երբեմն խորովածի ախորժաբեր բուրումը, կը բռնէին սեղանատունը: Անոնք, որոնք կերակուր ունէին, անհամբեր ախորժակով կ'անցնէին իրենց ափսէներուն առջեւ, իսկ չքաւորները կը խոնուէին անկիւն մը, հեռու միւսներէն:

Միշտ այդ ժամուն, անորոշ անհանգստութիւն մը կը գրաւէր հոգիս: Տրտամօրէն կը դիտէի քոյրս, որ մեծ ախորժակով կը սկսէր ճաշել, մինչ ինձի համար կերակուրներուն իւղի հոտը զգուելի էր: Ա՛հ, եթէ ձգէին, որ թթու լեմոն մը ուտէի նարինջի պէս...

Դեռ չէի կրնար դատել կացութիւններն ու անարդարութիւնը , եւ անորոշ

Խղճահարութիւն մը զիս կը տանջէր: Միւս կողմէ, կը զայրանայի չքաւորներուն դէմ՝ իրենց ողորմելի երեւոյթին համար...

Օր մը կը յիշեմ, բակը նախընթրիքի պահուն Մելինէ անունով աղջիկ մը կ'եռաս կ'ուտէր – եղանակին համար հագուազիւտ պտուղ: Դէմը նստած էր չքաւոր աղջիկ մը, որ գող կատուի աչքերով կը դիտէր. . . :

Մելինեն մեկ ասիին մեջ բռնած էր կեռասները, միւս ձեռքով կը բռներ կեռասի մը կոթէն եւ կը մօտեցնէր բերնին՝ խածնելով հիւթեղ պտուղը: Դիմացը նստած աղջիկը ամէն անգամ շրթունքներով ուտելու շարժում մը կ'ըներ՝ բերնին ջուրերը վազցնելով:

Այս տեսարանը զիս տակնուվրայ ըրաւ: Ճկուն ու վայրենի շարժումով մը մօտեցայ, իլեցի կեռասները Մելինէին ասիէն ու թափով նետեցի բակի պատէն անդին...

Եւ երբէք չհասկցայ, թէ ինչո՞ւ փոխանակ Մելինէին՝ չքաւոր աղջիկն էր որ սկսաւ հեծեծանքով լալ:

Չապէլ Եսայեան <<Սիլիհտարի Պարտէզները>>

Ա – Մեր հեղինակին համար ինչո՞ւ չարչարանք մըն էր դպրոցին ճաշին ժամը: Ի՞նչ վիճակ կը տիրէր աշակերտներուն մեջ որ կ'անհանգստացնէր զինք: /5 նիշ/

1 Ա - Ինչպէս ինք կը վկայէ դպրոցին մեջ ամենէն տաժանելին՝ ճաշի ժամն էր:

-Տիրող անհաւասարութիւնը զինք կ'անհանգստացնէր:

-Չքաւորները՝ հազիւ հաց ու ձիթապտուղ կ'ունենային:

-Ոմանք՝ կանոնաւոր կերակուր եւ պտուղ մը:

-Հարուստները իրենց ծառայով երկու երեք տեսակ կերակուր եւ անուշեղէն կը դրկէին իրենց զաւակներուն:

/3 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն 0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Բ – Ինչպիսի՞ հոգեվիճակի մեջ կ'ըլլար այդ պահուն մեր հեղինակը: Ձեր խօսքը եւ իր հոգեվիճակը հաստատող երեք (3) փաստեր՝ նախադասութիւններ հատուածէն գտէք եւ գրեցէք: (60 բառի շուրջ) / 8 նիշ/

Բ - Միշտ այդ ժամուն անորոշ անհանգստութիւն մը կը գրաւէր հեղինակին հոգին:

-Անոնք որ կերակուր ունէին անհամբերութեամբ կ'անցնէին ուտելու, չքաւորները կը հաւաքուէին անկին մը:

-Դեռ չէի կրնար դատել կացութիւններն ու անարդարութիւնները:

-Անորոշ խղճահարութիւն մը կը տանջէր:

-Միւս կողմէ կը զայրանայի չքաւորներուն դէմ՝ իրենց ողորմելի երեւոյթին համար:

/ 6 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն

0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Գ - <<Այս տեսարանը զիս տակնուվրայ ըրաւ>> կ'ըսէ հեղինակը: Ինչո՞ւ, գրեցէք ձեր կարծիքը: Ապա ի՞նչը մնաց իրեն համար անհասկնալի: Գրեցէք իր խօսքը այս մասին: / 5 նիշ/

Գ - Գրել անձնական կարծիք:

-Երբէք չհասկցայ, թէ ինչու՞ փոխանակ Մելինէին՝ չքաւոր աղջիկն էր որ սկսաւ հեծե՞ծանքով լալ:

/4 նիշ բովանդակություն 1 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն
0.25 նիշ պիտի պակսի ուղղագրական իւրաքանչիւր սխալի համար/

Դ – Հետեւեալ բայերը գրեցէք Սահմանական եղանակի Անցեալ
Անկատար ժամանակով եւ ճիշդ դէմքով ու թիւով՝ այս հատուածին բաց
ձգուած մասերուն մէջ: / 9 նիշ /

Տեսնել	Կարդացողները այս հատուածով հեղինակին մեծնալը _____ եւ
Նկատել	_____ ուրիշ
Երթալ	անկիւնէ մը, տունէն դուրս, դպրոցական իր փորձառութիւններու մէջէն: Ատեն մը, ան _____ իր առաջին
Գնահատել	դպրոցը, հին ժամանակներէ մնացած
Պատժել	<<դպրատուն մը>>: Իր խիստ վարժապետը _____ իր
Արժեցնել	արթնութիւնը: Բայց անկարգութիւններու պատճառով յաճախ _____:
Արժանանալ	Ատեն մը ետք _____ ինքզինք հեղինակը իբր ուշիմ աշակերտ եւ _____ ուսուցիչներուն
Ճանչնալ	գովասանքին: Ան _____
Հասկնալ	դպրոցին մէջ աշխարհը, մարդոց ընկերութիւնը՝ անհաւասարութիւններով: Կարգապահութեան եւ աշխատասիրութեան Կարեւորութիւնը _____ ան:

- Դ Կը տեսնէին
- Կը նկատէին
- Կ'երթար
- Կը գնահատէր
- Կը պատժուէր
- Կ'արժեցնէր
- Կ'արժանանար
- Կը ճանչնար
- Կը հասկնար

/Ճիշդ դէմքով ու թիւով գրելու բայց ուղղագրական սխալ կատարելու պարագային 0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր բառէ/

Ե – Լեզուական աշխատանք – Բառակազմութիւն

Հետեւեալ պարզ բառերով կազմեցէք մէկական ածանցեալ, բարդ եւ բարդաձանց բառեր: / 3 նիշ/

ՊԱՐՁ	ԱԾԱՆՑԵԱԼ	ԲԱՐԴ	ԲԱՐԴԱԾԱՆՑ
Դաս			
Ազգ			

Ե Դաս

Դասարան
Դասընկեր
Դասընկերություն
Ազգ
Ազգային
Ազգասեր
Ազգասիրություն

/Այս բառերու փոխարեն կարելի է կազմել այլ բառեր. ուղղագրական սխալ ունենալու պարագային իւրաքանչիւր բառի համար 0.5 նիշի փոխարեն պիտի ստանան 0.25 նիշ/

2 ՆԻԻԹԻ ԸՄԲՌՆՈՒՄ ԵՒ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

(30 նիշ)

Ուշադրութեամբ կարդացէք հետեւեալ հատուածը եւ պատասխանեցէք հարցումներուն:

Ձին-ձմեռ է: Անկիւնի պատուհանէն կը դիտեմ փողոցը, որ կը բարձրանայ դէպի վերի թաղը: Հատ-հատ անցորդներ, վերարկուին օձիքը բարձրացուցած, ֆէսը քաշած ականջներուն, կը սահին պատերու երկայնքին: Շուները դողդղալով կը կաղկանձեն եւ ապաստան կը փնտռեն մէկ տան սեմէն միւսը անցնելով:

Յանկարծ երեխաներ կը յայտնուին փողոցին մէջ, զանազան տարիքներու: Հայոց դպրոցէն նոր արձակուած աշակերտներն են: Անոնք դպրոցական պայուսակներով եւ ճաշամաններով բեռնաւորուած են, բայց

վազվզելով կը սահին ձիւներուն վրայէն: Մանչերը չեն շտապեր տուն. խմբակներ կը կազմեն, եւ պայուսակ ու ճաշաման մէկդի դրած՝ անձնատուր կ'ըլլան ձիւնագնդիկի խաղին: Գոռում-գոչումը կը բռնէ փողոցը: Սուր ճիչեր ու կանչեր կու գան կը զարնուին մինչեւ իմ պատուհանիս ապակիին, որուն մէկ մասը ծածկուած է ձիւնի հաստ խաւով մը:

Ցաւս մոռցած՝ ամբողջ հոգիով կը հետեւիմ տղոց խաղին: Որքա՛ն պիտի ուզէի իրենց հետ ըլլալ. . . եւ ալ շտապ-շտապ ձիւնէ գնդակներ շինէի, նետէի մէկուն եւ միւսին վրայ, թաւալէի ձիւներուն մէջ, խնդայի, վազէի-վազվզէի...

Բայց մեծերը չեն հասկնար այդ բոլորը:

Մեր տան ընդարձակ պարտէզը գլխաւոր բեմն էր իմ քաջագործութիւններուս: Կը մագլցէի ծառերուն մինչեւ գագաթները, կը շուլլուէի պատերուն վրայ, կը ցատկէի դրացի պարտէզները եւ կ'երթայի խաղալու տարեկից մանչերու հետ:

Շատ բան չեմ յիշեր այն տարիներու հոգեկան վիճակներէս. միայն՝ որ ամսանձ ուժեր քառսային վիճակ մը ստեղծած էին մէջս. անմիջական մղումով կը գործէի արարքներ, որոնք կը թուէին հակասական, անբացատրելի:

Զապէլ Եսայեան << Սիլիհտարի Պարտէզները >>

Ա – Տարուայ n^օ թղանակն էր: Փողոցի վիճակէն յիշեցէք երկու (2) փաստեր որոնք կը հաստատեն զայն: /6 նիշ /

2 Ա -Չիւն-ձմեռ է:

-Հատ-հատ անցորդներ, վերարկուին օձիքը
բարձրացուցած, ֆէւը քաշած ականջներուն, կը սահին պատերու
երկայնքին:

-Շուները դողողալով կը կաղկանձեն եւ ապաստան կը փնտռեն մէկ տան սեմէն միւսը անցնելով:

/4 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն 0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Բ – Ի՞նչ վիճակ կը տիրէր փողոցին մէջ: Որո՞նք էին հերոսները: Վիճակը ներկայացնող երեք (3) փաստեր՝ նախադասութիւններ ներկայացուցէք հատուածէն: Հեղինակը ինչպէ՞ս կ'իմանայ այդ մասին: Որպէս բացատրութիւն գրեցէք իր խօսքը այդ մասին:
(60 բառի շուրջ) /9 նիշ /

Բ - Երեխաներու իրարանցում՝ փողոցին մէջ:

-Հայոց դպրոցէն նոր արձակուած աշակերտներն էին:

-Անոնք դպրոցական պայուսակներով բեռնաւորուած են, բայց վազվզելով կը սահին ձիւներուն վրայէն:

-Մանչերը չեն շտապեր տուն. խմբակներ կը կազմեն, պայուսակ ու ճաշաման մէկդի դրած՝ անձնատուր կ'ըլլան ձիւնագնդիկի խաղին:

-Գոռում-գոչումը կը բռնէ փողոցը:

-Հեղինակը կը լսէ անոնց աղմուկը:

-Սուր ճիչեր ու կանչեր կու գան կը զարնուին մինչեւ իմ պատուհանիս ապակիին, որուն մէկ մասը ծածկուած է ձիւնի հաստ խաւով մը:

/ 6 նիշ բովանդակութիւն 3 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն 0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Գ – Հեղինակն ալ դուրսի հերոսներուն մասնակցելու փափաք ունէ՞ր: Իր խօսքերէն գրեցէք երեք (3) հատ, ձեր ըսածը հաստատելու համար:
/6 նիշ/

- Գ - Այո, հեղինակը ունէր փափաք մասնակցելու:
-Ցաւս մոռցած ամբողջ հոգիով կը հետեւիմ տղոց խաղին:
-Որքան պիտի ուզէի իրենց հետ ըլլալ...
-Ես ալ շտապ –շտապ ձիւնէ գնդակներ շինէի, նետէի մէկուն եւ միւսին վրայ:
-Թաւալէի ձիւներուն վրայ, խնդայի, խօսէի...

/4 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն 0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Դ – Այդ տարիներու հոգեկան վիճակներէն շատ բան կը յիշէ՞ր հեղինակը:
Ի՞նչ կը գրէ ան իր կատարած արարքներուն մասին: / 6 նիշ/

- Դ - Այդ տարիներու հոգեկան վիճակներէն շատ բան չէր յիշեր հեղինակը:
-Անսանձ ուժեր քառսային վիճակ մը ստեղծած էին մէջս.անմիջական մղումով կը գործէի արարքներ որոնք կը թուէին հակասական, անբացատրելի:

/4 նիշ բովանդակություն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտություն
0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Ե – Հետեւեալ նախադասութիւններուն մէջ ընդգծուած բառերուն տեղ գրեցէք
նոյն իմաստը ունեցող այլ բառ մը: / 3 նիշ/

Մանչերը չեն շտապէր տուն:

Թաւալէի ձիւներուն մէջ, ինդայի, վագէի...

Անմիջական մղումով կը գործէի արարքները:

Ե -Շտապէր-աճապարէր

-Թաւալէի-գլորէի

-Մղումով-սլացքով

/Ճիշդ գրած իմաստը եթէ ուղղագրական սխալ ունի պիտի պակսի 0.25
նիշ/

3

ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (40 նիշ)

Ա- Նկարագրեցե՛ք ձեր ընտանիքէն անձ մը որ սիրելի եւ յարգելի է ձեզի՝ իր ունեցած մարդկային յատկանիշերուն համար:

(շուրջ 140 բառ) /20 նիշ/

Բ- Գրեցե՛ք քաղաքի մը մասին, որ ձեզի համար կը տարբերի այլ քաղաքներէ իր գեղեցկութեամբ եւ հետաքրքրութիւններով:

(շուրջ 140 բառ) /20 նիշ/

3

ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ա եւ Բ

-Իւրաքանչիւր նիւթով կ'ակնկալուի զարգացնել իրենց մտածումներն ու զգացումները:

/Իւրաքանչիւր նիւթ 20 նիշ հետեւեալ բաժանումով՝ 6 նիշ բովանդակութիւն 5 նիշ կառուցուածք 6 նիշ արտայայտութիւն 3 նիշ ուղղագրութիւն, իւրաքանչիւր 5 ուղղագրական սխալի համար պիտի պակսի 1 նիշ/

Ուշադրութիւն դարձուցե՛ք ուղղագրութեան եւ ձեռագիրին:

Յ Ա Ջ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն